տիր[1]) ժամ, խաչ, աղօթք կ'էնին։

Ժամանակ ըմ վերէն ընցաւ։ Խաբար ո՞րդուց տանք։—Պղնձէ քեաղքի Թագաւորի աղջկանից տանք։

Պղնձէ քեաղքի Թագաւորի աղջիկ մէ կուժ լիք ջիւր էր լցրև, խնձիւր բերան դրև, մէ կուժ էլ դարդակ էր բերան դրև. Թղթի մէջ կիրիր էր. «Բաղդասար տղայ, ես Պղնձէ քեաղքի Թագաւորի աղջիկն իմ. իմ սըրտ քանց էսա դարդակ կուժ սարսուփ ա[2]), իմ գլուխ քանց էսա լիք կուժ լիքն ի. Ասածու շնիւրքով լցուկ իմ. քառսուն տեղէ քառսուն մարդ ի էկած իմ վրէն ուղիլու, ես խօսք չըմ տուի. էրազով ղքի տըսիր իմ, արի ընձի առ, ընձի շատ տիւր[3]) կ'կեաս դիւ. էս Թուղթ կը կրիմ քե[4]) խամա։ Կրից, ասաց։

«Կ'տանիս Սասում, յաջակողմ յերդսէն կ'քցիս Բաղդասար տղի տեղաց[5]) վերայ։ Իբ[6]) որ էնի[7]) կտրիճ մարդ ի, Թող կեայ ձի[8]) տանի իւր խամա»։

Թուղթ բիրողնիր բիրան Սասում ղթուղթ. աջակողմ յերդսի վիրայ գնացին, տեսան, որ մէկ տեղաց շիւր ի քցած, մէ ջահիլ[9]) ջիւանն տղայ մէջ քնիր ի, քրդնիր ի. էնքան կարմրի, արիւուն կ'ասի. «Դիւ դէն կենա, ես յառաջանամ։ Մէ ջուխտ շամդան[10]) գլխին կ'վառուայ, մէ ջուխտ շամդան ոտներուն կ'վառուայ։

Թուղթ բիրողներաց մէկ էսաց. «Ա՜յ քոյրս, արի էրթանք էս մէկէլ էրդսի վիրայ աչկինք[11]), բալքի[12]) Բաղդասար տղէն էդ չի»։ Գնացին էն յերդսի վիրայ, տեսան, որ մի մարդ քնիր էր շորերաց մէջ. աչկիցին, տեսան էնենց ի քրդնի, որ էնի էն տղից տասնապատիկ դհա աղէկ ի։

Քուր ասաց. «Քուրս, էս ի Բաղդասար տղէն. Թալինք[13]) էս էրդիս վէ»։

Մէկէլ քուր ասաց. «Ա՜ղջիկ, վալլահ, էս մարդ շատ աղէկ

---

[1]) Անգամ։ [2]) Մաքուր։ [3]) Դիւր գալ, հաճոյ լինել։ [4]) Քեզ համար։ [5]) Անկողնի վերայ [6]) Երբ։ [7]) Նա, այն։ [8]) Ինձ։ [9]) Երիտասարդ։ [10]) Աշտանակ։ [11]) Նայենք։ [12]) Գուցէ։ [13]) Գգենք, շպրտենք։